



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 96

**Ձեռնարկողը՝**

**<<Բազալտ 7>> ՍՊԸ**

**Գործունեությունը՝**

**Սյունիքի մարզի Անգեղակոթի բազալտի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեքվություն**  
*Սյունիքի մարզ*

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 96

«23» 11 2018թ.

**Սյունիքի մարզի Անգեղակոթի բազալրի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝	<<Բազալր 7>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Անգեղակոթ բնակավայր

Անգեղակոթի բազալրների հանքավայրը գտնվում է Անգեղակոթ գյուղի վարչական տարածքում, բնակավայրից դեպի արևելք 1.5կմ և Սիսիան շրջկենտրոնից 15.0կմ դեպի արևմուտք հեռավորության վրա:

Հանքավայրի բազալրների պաշարները հաստատվել են նախկին ՀԽՍՀ Երկրաբանական վարչության ՊՏՀ-ի կողմից, 29.04.1967թ. թիվ 159 արձանագրությամբ: Հանքավայրը շահագործվում է 2005թ-ից մնացորդային պաշարները կազմում են 3674.0հազ.մ<sup>3</sup>: Հաշվեկշռային պաշարները հաստատվել են որպես հումք շինարարական քարերի և խճի արտադրության համար:

Բացահանքային դաշտի օտարման տարածքը կազմում է 2.78հա, մարվող պաշարների ծավալը՝ 247612.0մ<sup>3</sup>, III-C1 բլոկից, արդյունահանվող պաշարների ծավալը – 221612.0մ<sup>3</sup>:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ բազալրի մարվող զանգվածի կազմում է՝ 4952.0մ<sup>3</sup>: Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 50 տարի:

Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել միակողմանի ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով:

Ընդունված մշակման համակարգի տարրերը հաշվարկված են համաձայն օգտակար հաստաշերտի շահագործման տեխնոլոգիական սխեմայի, որով նախատեսվում է բլոկների արդյունահանման աշխատանքները կատարել հորատասնային աշխատանքների եղանակով:





Հանքային դաշտի շահագործման ընթացքում հաշվարկված են հետևյալ կորուստները.

- ընդհանուր բացահանքային կորուստներ, որոնք կախված են հանքավայրի լեռնաերկրաբանական պայմաններից: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում և հատակում՝ 10.3%,
- շահագործական կորուստներ, որոնք պայմանավորված են բացող կիսախրամների անցման ժամանակ տեղի ունեցող կորուստներով՝ 0.5%:

Բացահանքի տարածքը նախկինում շահագործվել է, ենթակառուցվածքները արդեն գոյություն ունեն և լեռնակապիտալ աշխատանքներ չեն նախատեսվում: Նախատեսվում է միայն՝ 1867.6.0մ նիշ ունեցող հանքաստիճանում 630.0մ<sup>3</sup> ծավալով մակաբացման ապարների հեռացում և լցակույտային հրապարակի նախապատրաստում 350.0մ<sup>3</sup> ծավալով:

Աշխատանքային հորիզոնի բացման ընթացքում օգտագործվելու է բուլդոզեր-ավտոմոբիլային կոունկ-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրը:

Հանքավայրի լեռնատեխնիկական և լեռնաերկրաբանական պայմանները կանխորոշում են բացահանքի շահագործումը միակողանի, ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով, մակաբացման ապարները մինչև 11-րդ տարին արտաքին լցակույտեր, իսկ 11-րդ տարուց՝ ներքին լցակույտեր տեղափոխելով: Միևնույն ժամանակ, աստիճանաբար, արտաքին լցակույտերից մակաբացման ապարները տեղափոխվելու են ներքին լցակույտեր:

Մակաբացման ապարները նախագծվող բացահանքի վերջնական եզրագծի սահմաններում ներկայացված են մինչև 1.3մ հզորության ժամանակակից առաջացումներով (այլովիալ և դեյլովիալ), խարամացած, քայքայված բազալտներով:

Մակաբացման ապարները հեռացումը կատարվում է բուլդոզեր DՇ-170.03, TO-25 անիվային բարձիչ լեռնատրանսպորտային համալիրով:

Բացահանքի լցակույտային ապարները՝ 205296.3մ<sup>3</sup> ծավալով, ներկայացված են մակաբացման ապարներով և արտադրական թափոններով:

Ժամանակավոր արտաքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է մոտ 6000.0մ<sup>2</sup>, միջին բարձրությունը 7.5մ, այդ թվում՝ հողային շերտի լցակույտի զբաղեցրած տարածքը՝ 600մ<sup>2</sup>: Ընդունված է լցակույտաառաջացման բուլդոզերային եղանակը:

Բացահանքում արտադրված բլոկների բարձումը  $\text{E}\delta\text{A}\text{C}-256\text{A}$  մակնիշի ավտոինքնաթափի մեջ կատարվելու է KC-4561 ավտոմոբիլային կոունկի միջոցով:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև փոշենստեցման նպատակով աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և լցակույտի մակերևույթի ջրման համար: Խմելու ջուր բերվելու է կցովի ջրի ցիստեռնով:

Տեխնիկական ջուրը մատակարարվելու է KO-002 մակնիշի ջրցան լվացող ավտոմեքենայով:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում նախ բացահանքի հատակին փոխվելու ու հարթեցվելու են արտադրական թափոնները, հողմնահարված բազալտները, ժամանակակից առաջացումները, ապա դրանց վրա փոխվելու է հողային շերտը:

Ներքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 2.56հա:

- մակաբացման ապարների փոում և հարթեցում՝ 2.56հա,
- արտադրական հրապարակի տարածքի վերականգնում՝ 0.07հա,
- բացահանքը սպասարկող ավտոճանապարհների հարթեցում՝ 0.05հա:



Հարթեցման աշխատանքներ կիրականացվեն նաև արտաքին լցակույտի, արտադրական հրապարակի տարածքներում, բացահանքը սպասարկող ավտոճանապարհին:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսված է 1225,6 հազ. դրամ:

Հանքավայրի տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանակազմի տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն: Համաձայն ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվող հանքավայրը մշակութային հուշարձաններից գտնվում է 1.5-2.0 կմ հեռավորության վրա:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումները:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, եռամսյակային հաճախականությամբ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ դրանց պահպանման համար նախատեսված տեղից դեպի հավաքող փոսը ուղղությամբ, տարին երկու անգամ հաճախականությամբ,

- բացահանքի, լցակույտերի կողերի դեֆորմացիաների գնահատում՝ յուրաքանչյուր ամիս:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Հանրությունը 4-րդ փուլի հանրային քննարկումներից հետո բնապահպանության նախարարություն է ներկայացրել գրավոր բողոքներ, առաջարկություններ և դիտողություններ, ինչը քննարկվել և պարզաբանվել է փորձաքննական գործընթացում: Հանրությունը՝ ներկայացված գրություններով դեմ է արտահայտվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները, ՀՀ Անշարժ Գույքի Կադաստրի Կոմիտեն:

### Փորձաքննական հիմնավորումներ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ Օրենք/ 27-րդ հոդվածի 2-րդ մասի ստորմասնակցության





գործընթացում ձեռնարկողը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքով սահմանված պահանջները, ապահովել ներկայացվող նյութերի ամբողջականությունը, հավաստիությունը և հիմնավորվածությունը:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից ընկերությանը 06.10.2017թ-ին տրամադրված թիվ SU-52 տեխնիկական առաջադրանքում ամրագրված է <<գործունեության համար պահանջվող տարածքների՝ հողատեսքերի, կարգավիճակը և դրանց օտարման համար պահանջվող համապատասխան համաձայնությունները>> պահանջը: Տեխնիկական առաջադրանքի հիման վրա կազմված և 10.07.2018թ. բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության մեջ նախատեսվող գործունեության ազդեցության ենթակա տարածքների հողատեսքը նկարագրված է որպես վարելահող: Բնապահպանության նախարարությունը փորձաքննական գործընթացում՝ Օրենքով սահմանված կարգով երկարաձգված 10-օրյա ժամկետում, Անշարժ Գույքի Կադաստրի Կոմիտեից 23.11.2018թ. ստացված հիմնավորումից տեղեկացել է, որ նախատեսվող գործունեության տարածքում առկա են անտառային հողեր:

Ոչ հավաստի տեղեկատվության արդյունքում հանքարդյունահանման աշխատանքների իրականացման հնարավոր ազդեցության գնահատումը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա իրականացվել է ոչ լիարժեք:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները <<Բազալտ 7>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Անգեղակոթի բազալտի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

Տնօրենի տեղակալ

Գլխ. մասնագետ



Ա. Դոնոյան

Զ. Զուռնայան